ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Արգիշտի Վարդանյան

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱՃՅՈՒՂԻ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ

Հիմնաբառեր. *Մամիկոնյաններ, Արտավազդ, Վասակ, Վաչե, Խոսրով Կոտակ, Փավստոս Բուզանդ, Արշակ Բ, պատմիչներ, կաթողիկոս:*

Մամիկոնյանների տոհմը, լինելով վաղմիջնադարյան Հայաստանի խոշորագույն նախարարական տներից մեկը, իր վրա է բևեռել պատմիչների ուշադրությունը: Սակայն սկզբնաղբյուրներում քիչ չեն նաև ոչ հավաստի տեղեկությունները: X դ. պատմիչ Մեսրոպ Վայոցձորեցին, առանց որևէ հիմքի, նշում է, որ Վարդան, Վասակ և Վահան Մամիկոնյաններն Արտավազդի որդիներն էին, և, այս հանգամանքով պայմանավորված, հետագա ուսումնասիրողները նրանց համարել են Արտավազդի որդիներ: Սակայն սկզբնաղբյուրների մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները տոհմակիցներ էին, այլ ոչ թե հայր և որդի: Երբ 338 թ. Արտավազդը մանուկ հասակում հռչակվեց սպարապետ, Վասակը և իր եղբայրները հասուն տարիքում էին, և Վասակն այդ ժամանակ արդեն արքայակն Արշակի դայակն էր: Իսկ Արտավազդը, որպես սպարապետ Վաչե Մամիկոնյանի որդի և ավագ ճյուղի ներկայացուցիչ, Խոսրով Կոտակից ստացավ սպարապետությունը և Մամիկոնյանների տոհմատիրությունը, որով թագավորը պահպանեց ավագության կարգը:

Մամիկոնյան իշխանական ընտանիքը, Արշակունյաց թագավորությունում լինելով խոշորագույն նախարարություններից մեկը, իր ուրույն տեղն ունի վաղմիջնադարյան Հայաստանի պատմության մեջ: Գլխավորելով այնպիսի առանցքային գործակալություն, ինչպիսին էր սպարապետությունը, Մամիկոնյանները մասնակցել են պետական կառավարմանը՝ հանդիսանալով Արշակունի գահակալների հենարանը թե՛ ներքին, թե՛ հատկապես արտաքին վտանգի պահին, և այդ առումով մյուս նախարարությունների մեջ նրանք շահել էին առաջնությունը: Մամիկոնյանների այդ գործունեության հանգամանքով էր պայմանավորված, որ պատմիչների աշխատանքներում արտացոլվել են նրանց մեծ ու փոքր գործերը: Սակայն սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունները ոչ միշտ են հավաստի և տարակարծությունների տեղիք են տալիս, մասնավորապես՝ պատմիչների հաղորդումները ժամանակագրական առումով IV դ. գործունեությամբ աչքի ընկած Վասակ և Արտավազդ Մամիկոնյանների վերաբերյալ: Այդպիսի տեղեկություն ենք գտնում 967 թ. Մեսրոպ Երեցի կողմից գրված Ներսես կաթողիկոսի վարքագրությունում, որտեղ նշվում է, որ Մամիկոնյան եղբայրներն Արտավազդի որդիներն էին. «Եւ էին յազգէն Մամիկոնեից եղբարք չորք. և անուն նոցա Վարդան և Վասակ, Վահան և Վրուժ, որդիք Արտաւազայ որդւոյ Վաչէի Մամիկոնենւոյ. և կացուցանէր զնոսա զօրավարս Հայոց մեծաց»[1]: Քննության ենթարկելով

* Հոդվածը ներկայացվել է 27.04.2021 թ., գրախոսվել՝ 28.06.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի, «Սոփերք Հայկականք», Զ, Վենետիկ, 1853, էջ 17: Մեսրոպ Երեցի աշխատության գիտաքննական բնագիրը կազմել է Գ. Տեր-Վարդանյանը (տե՛ս Մեսրոպայ Երիցու Վայոցձորեցւոյ Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Հայոց Հայրապետի, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս, 2010, էջ 667-743): Մեսրոպ Վայոցձորեցու հաղորդման համաձայն՝ Մամիկոնյան եղբայրները չորսն էին, կրտսերը՝ Վուրժ Մամիկոնյանն էր: Սակայն այդպիսի Մամիկոնյանի վերաբերյալ սկզբնաղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Եթե այդպիսի Մամիկոնյան լիներ, ապա Փավստոս Բուզանդը, որն ամենայն մանրամասնությամբ է անդրադարձել IV դ. Մամիկոնյաններին, նրանց կատարած մեծ ու փոքր գործերին, կհիշատակեր նրան: «Վուրժ» անունը հավանաբար ընդօրինակող գրիչներից մեկի ձեռքով ներմուծվել է հետագա դարերում (տե՛ս Վարդանյան Ա., Մամիկոնյանների գործունեությունը 338-368 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», (այսուհետև՝ ԲԵՀ), 2020, № 2, էջ 21, ծան. 14):*

սկզբնաղբյուրներում խնդրո հարցի վերաբերյալ տեղեկությունները՝ միանշանակ կարող ենք, փաստել, որ մինչև X դ. որևէ պատմական երկում չկա այնպիսի հաղորդում, որ Վասակն Արտավազդ Մամիկոնյանի որդին էր, մասնավորապես՝ այդպիսի հաղորդում չունի Փավստոս Բուզանդը: Հետագա ուսումնասիրողների մի մասը փորձել է չանդրադառնալ խնդրո առարկա հարցին, իսկ մի մասը կրկնում է X դ. հեղինակին՝ չխորանալով հարցի մանրամասների մեջ և համարելով, որ IV դ. Հայաստանի ռազմաքաղաքական կյանքում մեծ դեր խաղացած Վարդան, Վասակ և Վահան Մամիկոնյաններն Արտավազդի որդիներն են: Սակայն, ինչպես կտեսնենք ստորև, հարցի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ նրանք Արտավազդի որդիները չէին և նույնիսկ նրանից տարիքով մեծ էին:

Չսպասելով 298 թ. Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրի ժամկետի ավարտին՝ պարսից արքա Շապուհ Բ-ն (309-379 թթ.) պատերազմ սկսեց Հռոմեական կայսրության և նրա դաշնակից Մեծ Հայքի դեմ: Մի քանի անգամ չհասնելով հաջողության՝ պարսկական զորաբանակները հերթական արշավանքի ժամանակ 338 թ. ներխուժում են Հայաստան: Ճակատամարտում, որի վայրը մեզ անհայտ է, հայկական կողմը ծանր կորուստներ է կրել՝ տալով մեծաթիվ զոհեր, այդ թվում՝ սպարապետ Վաչե Մամիկոնյանը[1]: Քանի որ սպարապետական մականը պատկանում էր Մամիկոնյան տոհմին[2] և հորից անցնում էր որդուն[3], Խոսրով Կոտակը (330-338 թթ.), հաշվի առնելով Մամիկոնյանների անձնազոհ պայքարը պետության միասնության պահպանման համար, ըստ Փավստոս Բուզանդի. «զՎաչէի զօրավարի փոքրիկ մանգիկ մի զնորուն զորդի ի հայրնեի բարձր գահուն մատուցանէին, որում անուն էր յանուն հօր իւրոյ Արտաւազդ: Առաջի թագաւորին զհօրն պատիւն ի գլուխն դնէին, և զսպարապետութեան նորուն տեղի զի կարի որդի վաստակաւորի էր, և ի վաստակաւոր ազգէ. զի այլ յազգին ոչ գտաւ հօժկու, զի ի մեծ պատերազմին մեռան»[4]: Մինչ Արտավազդ Մամիկոնյանի չափահաս դառնալը թագավորի հրամանով մանուկ սպարապետին խնամակալներ կարգեցին Արշավիր Կամսարականին և Անդովք Սյունուն. «զի նոքա փեսայք էին տանն Մամիկոնեան տոհմին»[5]: Արձանագրենք, որ այս դեպքերը տեղի են ունեցել 338 թ.: Նույն տարում մահանում է նաև Խոսրով Կոտակը, և գահ է բարձրանում նրա որդի Տիրանը (338-346 թթ.): Արտավազդ Մամիկոնյանը, ըստ պատմիչի, դեռևս մանուկ էր և միայն ձևականորեն էր զբաղեցնում սպարապետի պաշտոնը՝ ծնված լինելով մոտավորապես 320-ական թթ. կեսերին: Երբ Տիրանը հրամայեց կոտորել Արծրունի և Ռշտունի նախարարական տներին[6], արդեն Արտավազդին տեսնում ենք գործողությունների կիզակետում: Ըստ Փավստոս Բուզանդի՝ երբ պետք է մահապատժի ենթարկեին երկու տոհմերի մանուկներին. «Եւ անդ դիպեալ Արտաւազդ և Վասակ, արք ի Մամիկոնեան տոհմէն, որք էին զօրավարք ամենայն զօրացն Հայոց, որք յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանթի հարեալք ի դուրս գնացին. զէնն ի վեր առեալք կռուոյ պատրաստէին՝ ի վերայ այնց մանկաց մեռանել»[7]: Պատմիչի հաղորդումը ցույց է տալիս, որ Արտավազդը և

---

[1] *Տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք.Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), Ե., 1987, էջ 44:*

[2] *Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Ե., 1966, էջ 435:*

[3] *IV դ. ամբողջ ընթացքում, բացառությամբ 376-377 թթ. Բատ Սահառունու և 386-388 թթ. Սահակ Բագրատունու պաշտոնավարման շրջանից, սպարապետության պաշտոնը կբաղեցրել են Մամիկոնյանները:*

[4] *Փավստոս Բուզանդ, էջ 46:*

[5] *Տե՛ս նույն տեղում:*

[6] *Այս երկու նախարարություններն իրենց կալվածքների կբաղեցրած դիրքի շնորհիվ ռազմավարական մեծ կարևորություն ունեին պետության համար և վերահսկում էին հարավային շրջանների առևտրական մայրուղիները, որն էլ դարձավ նրանց տների կորստյան պատճառը (տե՛ս Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Ե., 2016, էջ 55):*

[7] *Փավստոս Բուզանդ, էջ 74: Հայոց արքունիքում ծավալվող իրադարձություններում չենք տեսնում Վարդան Մամիկոնյանին, հավանաբար նա արքայի ձեռնարկի կողմնակից է եղել և չի սատարել Արտավազդ Մամիկոնյանի և եղբոր՝ հռոմեական կողմնորոշման պարագլուխ Վասակի գործունեությանը: Հետագայում եղբայրների միջև այնքան սրվեցին հարաբերությունները, որ Վասակը հանձն առավ ավագ եղբոր սպանության գործը (տե՛ս նույն տեղում, էջ 200, 202):*

Վասակը հայր և որդի չէին, այլ ընդհանուր առմամբ նույն տոհմից էին: Նմանատիպ հաղորդում ունի նաև Թովմա Արծրունին, նշելով, որ երբ Տիրանը հրամայեց կոտորել Արծրունիներին և Ռշտունիներին. «Ազդ եղև Մամիկոնեան սպարապետութեանն անոպայ գործն, և դիմեցին քաջասրտագոյնս ի վերայ սուսերամերկք զինեալք ի մէջ ամբոխին, Արտաւազդ և Վասակ Մամիկոնեանք, զբազումս տապաստ արկեալ ի սուրս իւրեանց, յափշտակեցին զՇաւասպ որդի Վաչէի Արծրունւոց, և զՄեհէդակ Ռըշտունի, քանզի էին մանկագոյնք տիովք. առին գնացին յամուրսն Տայոց»[1]: Արծրունյաց պատմիչը ևս չի նշում, որ Արտավազդը և Վասակը հայր և որդի էին: Մյուս պատմիչները ընդհանրապես չեն անդրադառնում այդ իրադարձություններին, իսկ Մովսես Խորենացին իր հակամամիկոնյանական տրամադրություններով ոչ միայն անդրադարձ չունի հիշյալ իրադարձություններին Մամիկոնյանների խաղացած դերին, այլև ավելին՝ նա նրանց կատարած մեծ ու փոքր գործերը վերագրում է այլ տոհմերի, օրինակ՝ Բագրատունիներին[2]: Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է Փավստոս Բուզանդի ևս մեկ այլ հաղորդում, որը ցույց է տալիս՝ Արտավազդը և Վասակը տոհմակիցներ էին: Նկարագրելով Տայքում Մամիկոնյան իշխանների մեկուսանալը՝ պատմիչը նշում է. «Եւ սնուցանէին զայն մանկունսն, զՇաւասպն և զՏաճատ. և ետուն նոցա զդստերս իւրեանց ի կնութեան, ուստի դարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան. և ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչև ի բազում ամս»[3]: Վերը նշվածի մեջ ուշագրավ է, որ «իրենց աղջիկները» արտահայտությամբ պատմիչը ցույց է տալիս, որ նրանք մի ընտանիքի չէին պատկանում: Փավստոս Բուզանդի երկի հետագա ուսումնասիրությունը հաստատում է վերը նշվածը: Այլ իրադարձությունների հետ կապված պատմիչը տալիս է Ռշտունյաց իշխանի հետ ամուսնացած Մամիկոնյան իշխանուհու անունը՝ Համազասպուհի[4], մանրամասն նկարագրում նրա ծագումը՝ նշելով. «Իսկ Վահանայ էր քոյրաթիւ ի Մամիկոնեան տոհմէն, քոյր Վարդանայ, Համազասպուհի. և էր նա կին Գարեգնի տեառնն Ռշտունեաց գաւառին»[5]: Համազասպուհու[6] տոհմաբանությունը ներկայացնող պատմիչը չի հիշատակում Արտավազդ Մամիկոնյանի անունը, քանի որ, ինչպես կտեսնենք ստորև, Արտավազդը ոչ միայն նրանց հայրը չէր, այլև տարեկից էր, գուցե ավելի փոքր էր տարիքով: Իսկ մյուս Մամիկոնյան իշխանուհին, որի անունը սկզբնաղբյուրներում չի պահպանվել, ամուսնացել էր Շավասպ Արծրունու հետ, Վարդանի, Վասակի և Համազասպուհու քույրը չէր, այլապես պատմիչը կհիշատակեր նրան: Հավանաբար նա Մամիկոնյան որևէ իշխանի դուստր էր, բայց ոչ Արտավազդի, քանի որ, եթե ընդունենք, որ այդ ամուսնությունները եղել են 340-ական թթ. կեսերին, ապա Վաչէ սպարապետի որդի Արտավազդը, որը 338 թ. մանուկ էր, այդ ժամանակ նոր չափահաս դարձած կլիներ և չէր կարող ամուսնացնելու տարիքի դուստր ունենալ: Եթե համարենք, որ Տիրանը կառավարել է ոչ թե մինչև 346 թ., այլ՝ 350 թ., ինչը պնդում են որոշ ուսումնասիրողներ, ապա այդ դեպքում էլ Արտավազդ Մամիկոնյանը կարող էր լինել մոտավորապես 23-25 տարեկան: Ինչպես Ս. Կոգյանն է նշում է, 347 թ. Արտավազդին հաջողվել էր պահանջված տարիքի հասնել[7] ու չէր կարող իր «որդի» Վասակի հետ ընդդիմանալ թագավորին և իր «դստերը» կնության տալ կոտորածից փրկված իշխաններից որևէ

---

[1] *Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց, Վ. Վարդանյանը (այսուհետև՝ Թովմա Արծրունի և Անանուն), Ե., 1985, էջ 98:*

[2] *Տե՛ս Ադոնց Ն., Քննություն Մովսես Կաղանկատվացու, աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պ. Հովհաննիսյանը, Էջմիածին, 2005, էջ 18-21:*

[3] *Փավստոս Բուզանդ, էջ 74: Թովմա Արծրունի և Անանուն, էջ 98:*

[4] *Նույն տեղում, էջ 274, 370, ծան. 160:*

[5] *Նույն տեղում: Ստ. Մալխասյանցը, քննության ենթարկելով պատմիչի հիշատակած «քոյրաթիւ» և «քոյր» բառերը, նշում է, որ Համազասպուհին Վարդանի հարազատ քույրն էր, իսկ Վասակի և Վահանի հետ քույրաթիվ էր, այն է՝ խորթ քույր էր, ուրիշ մորից ծնված (տե՛ս նույն տեղում, էջ 438-439, ծան. 160):*

[6] *Համազասպուհին սպանվեց 368-369 թթ.՝ Հայաստան պարսից արշավանքի ժամանակ, իր եղբոր՝ Վահան Մամիկոնյանի հրամանով, Վանի միջնաբերդում (տե՛ս նույն տեղում, էջ 274, 276):*

[7] *Տե՛ս Կոգեան Ս., Կամսարականները «Տեարք Շիրակայ եւ Արշարունեաց». պատմական ուսումնասիրութիւններ, Վիեննա, 1926, էջ 79:*

մեկին, քանի որ այդ որդին կամ դուստրը, լավագույն դեպքում, կլիներ մանկական տարիքում:

Բագրատունյաց թագավորության հզորացման տարիներին ստեղծագործած Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը Վասակին հիշատակում է ոչ թե Արտավազդի, այլ Վաչէի որդի. «Էին յաւուրս նորա սպարապետ զաւրուն Հայոց Վասակ որդի Վաչէի...»[1]: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ «զՎասակ զօրավար որդի Վաչէի»[2]: Այս հաղորդումներն առաջին հայացքից գայթակղիչ են և հարցին տալիս են սպառիչ պատասխան, քանի որ եթե Վասակին համարում ենք Վաչէի որդի, ապա ժամանակագրորեն էլ դեպքերի ընթացքն ընկնում է իր տեղը: Սակայն այդ դեպքում էլ չենք կարող անտեսել Փավստոս Բուզանդի հաղորդումն աշխարհաժողովի մասին, որտեղ Հայոց կաթողիկոս Վրթանեսը (333-341 թթ.) պարսիկների դեմ մղած մեծ ու փոքր ճակատամարտերը հայտարարեց սրբազան, զոհվածներին՝ նահատակներ[3], իսկ Խոսրով Կոտակը, ինչպես վերը նշել ենք, Վաչէի որդի դեռահաս Արտավազդին[4] տվեց սպարապետության աշտոնը և Մամիկոնյանների տանուտիրությունը, քանի որ, պատմիչի խոսքերով, տոհմի (ավագ ճյուղում - Վ. Ա.) չափահաս մարդ չգտնվեց, բոլորը զոհվել էին: Իսկ Մեսրոպ Վայոցձորեցու աշխատությունը, որն ինչպես նկատել է ականավոր պատմաբան Ա. Հովհաննիսյանը, Փավստոս Բուզանդի երկից քաղված է իր պատմական մասերով[5], և հեղինակը քննության չի ենթարկում ուսումնասիրվող հարցի վերաբերյալ Փավստոս Բուզանդի հաղորդումը, Մամիկոնյան տոհմի տարբեր անձնավորությունների անդրադառնալիս տալիս է նրանց տոհմագրությունը և առաջին անգամ հիշատակում է, որ Արտավազդը Վասակի հայրն էր՝ առանց հաշվի առնելու տարիքային տարբերությունը:

Օգտագործելով այս հանգամանքը՝ հետագա ուսումնասիրողների մի մասը, առանց հաշվի առնելու Փավստոս Բուզանդի հաղորդումը և հենվելով Մեսրոպ Երեցի տեղեկության վրա, նշում են, որ Արտավազդը Վարդանի, Վասակի և Վահանի հայրն էր [6]: Ուսումնասիրողների մյուս խումբն էլ, անդրադառնալով IV դ. դեպքերին, մասնավորապես՝ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանների՝ թագավորին հակադրվելու դրվագին, նրանց հիշատակում են որպես Մամիկոնյան իշխաններ՝ համարելով, որ հայր և որդի չէին[7], սակայն չմանրամասնելով: Վ. Վարդանյանը, քննելով Տիրանի կողմից Արծրունիների սպանդը և Մամիկոնյանների խաղացած դերը նրանց փրկության գործում, իրավացիորեն նշում է. «Վասակ Մամիկոնյանը և նրա տոհմակից Արտավազդը մանուկներին (Արծրունի և Ռշտունի - Վ. Ա.) փախցնում են իրենց հայրենի Տայք նահանգը»[8]: Վ. Վարդանյանի տեսակետը հայ պատմագիտության մեջ առաջիններից էր, որ տարանջատում է Վասակին և Արտավազդին՝ ցույց տալով, որ նրանք միմիայն տոհմակիցներ էին, ավելին՝ երկու տոհմերի փրկության գործում առաջնությունը տալիս է Վասակին: Սակայն Մամիկոնյանների գործունեության այդ շրջանն ուսումնասիրելը հեղինակի խնդրից դուրս է, հետևաբար դրան մանրամասն չի անդրադառնում:

---

[1] *Ստեփանոսի Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ հատոր, Ժ. դար, Ե., 2011, էջ 680:*

[2] *Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյանը, Ե., 1956, էջ 323:*

[3] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 44, 46: Տե՛ս նաև Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, կազմեց Ռ. Մաթևոսյանը, Էջմիածին, 1999, էջ 70:*

[4] *Արտավազդ Մամիկոնյանը կրում էր իր պապի՝ Արտավազդի՝ Վաչէի հոր անունը, որի գործունեության մասին վերջին ուսումնասիրությունը տե՛ս Վարդանյան Ա., Մամիկոնյան տոհմը Տրդատ Մեծ և Խոսրով Կոտակ Արշակունիների օրոք, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2019, №2, էջ 24-32):*

[5] *Տե՛ս Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմություն, Ե., 1957, էջ 18:*

[6] *Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 447: Եղիազարյան Վ., Մեսրոպ Մաշտոցը՝ Մամիկոնյան տոհմի ազնվական, «Էջմիածին», 2017, Ա, էջ 54, 57, ծան. 41: Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսեսի հայոց հայրապետի պատմությունը, թարգմանությունը գրաբար բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Եղիազարյանի, Վանաձոր, 2015, էջ 121, ծան. 27, էջ 123-124, ծան. 36, 37, 39 և ուրիշներ:*

[7] *Տե՛ս Կոգեան Ս., նշվ. աշխ., էջ 79, 80: Markwart J., Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabichen Geographen, Wien, 1930, s. 58*, 59*. Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 56:*

[8] *Վարդանյան Վ., Արծրունիները հայոց պատմության մեջ, Ե., 2002, էջ 22:*

Քննության ենթարկելով սկզբնաղբյուրներում առկա հաղորդումները և ուսումնասիրողների տեսակետները՝ միանշանակ է, որ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները տոհմակիցներ էին, այլ ոչ թե հայր ու որդի: Նշենք ևս մի քանի փաստ: 338 թ., երբ ըստ Փավստոս Բուզանդի՝ Արտավազդը մանուկ էր, Վասակը հասուն տարիքում էր՝ ծնված լինելով 309-311 թթ.[1], 330-340-ական թթ. սկզբներին արքայազն Արշակի դայակն էր[2], և բնական է՝ թագաժառանգի դաստիարակությունը պետք է վստահեին հասուն անձնավորության, որը պետք է նախապատրաստեր գահի ապագա ժառանգորդին: Իսկ եթե վերը նշվածին ավելացնենք, որ Վասակը ուներ նաև ավագ եղբայր՝ Վարդանը[3], ապա նրանք ոչ մի կերպ չէին կարող լինել Արտավազդ Մամիկոնյանի որդիները, քանի որ վերջինիս չափահասության ժամանակ, երբ նա 22-23 տարեկան էր, Վարդան Մամիկոնյանի դուստրը՝ Սանդուխտը, ամուսնացել էր ապագա Հայոց կաթողիկոս Ներսես Մեծի հետ, և 348 թ. Կեսարիա քաղաքում ծնվում է նրանց որդին՝ Սահակը՝ Վարդան Մամիկոնյանի թոռը[4]:

Վերը նշված փաստերը ցույց են տալիս, որ Մամիկոնյան Վարդան, Վասակ և Վահան եղբայրները ու Արտավազդը տոհմակիցներ էին: Արտավազդը՝ որպես սպարապետ Վաչե Մամիկոնյանի որդի և ավագ ճյուղի ներկայացուցիչ, Խոսրով Կոտակի կողմից ստացավ սպարապետությունը[5] և Մամիկոնյանների տոհմատիրությունը:

Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները, որոնք խիզախել էին Տիրան արքայի դահիճների ձեռքից ազատել Ռշտունի և Արծրունի մանուկներին, ինչը նրանց համար հղի էր անցանկալի հետևանքներով, մի քանի տարի անցկացրին Տայքի Էրախանի ամրոցում, քանի որ հասկանում էին, որ կաթողիկոսներին և նախարարներին չխնայած Տիրան Արշակունին իրենց ևս պատժելու էր արքայական հրամանին ընդդիմանալու համար[6]: Սակայն վիճակն անսպասելի փոխվում է, երբ գահ է բարձրանում Արշակ Բ-ն[7], որն իր կառավարման հենց սկզբում պետական ծառայության վերադարձրեց Մամիկոնյաններին. «Յայնմ ժամանակի խնդիր ելանէր արքայն Արշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից. մանաւանդ զի իւր դայեակս և սնուցիչք էին: Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին, և դարձուցանէր զնոսա յընդանութիւնն, զի պառակտեալք և քակտեալք էին յընդանութենէն և յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խուլութեանն Տիրանայ: Եւ կացոյց արքայն զՎարդան զերէց եղբայրն ի նահապետութեանն ազգին իւրեանց, և զՎասակ զմիջին եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութիւնն զօրավարութեան յիրս պատերազմացն սոյնպէս և զկրտսեին ի պետս զօրացն կացուցանէր»[8]: Պատմիչի հաղորդումից երևում է, որ Արշակի կառավարման սկզբում սպարապետ Արտավազդ Մամիկոնյանն այլևս կենդանի չէր[9], այլապես սպարապետության պաշտոնը բաժին չէր հասնի արքայի դայակ[10] Վասակին, որն այն զբաղեցրեց 346-368 թթ.՝ տարածաշրջանի և Մեծ

---

[1] *Տե՛ս Համազասպյան Վ., Հայ ականավոր զորավար Վասակ Մամիկոնյան, «ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից պետական ձեռագրատուն (Մատենադարան), գիտական նյութերի ժողովածու», № 1, Ե., 1941, էջ 228:*

[2] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 106:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Տե՛ս «Սոփերք Հայկականք», Զ, էջ 19: Սահակ Պարթևի ծննդյան թվականը (տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, Պէյրութ, 1959, էջ 82:*

[5] *Ս. Կոգեանը քննելով 330-340-ական թթ. տեղի ունեցած իրադարձությունները, նշում է, որ մինչև Արտավազդի չափահաս դառնալը Մեծ Հայքի զորավարությունն իրականացրել է Արշավիր Կամսարականը (տե՛ս Կոգեան Ս., նշվ. աշխ., էջ 79-80)՝ դեռահաս սպարապետի խնամակալը:*

[6] *Տե՛ս Վարդանյան Ա., Մամիկոնյանների գործունեությունը 338-368 թթ., էջ 19:*

[7] *Արշակ Բ-ի գործունեության վերաբերյալ տե՛ս Եղիազարյան Ա., Հայոց պետականության պատմության ուսանելի էջերից, Արշակ Բ-ի դարաշրջանը, «Գիտական Արցախ», 2018, № 1, էջ 15-21:*

[8] *Փավստոս Բուզանդ, էջ 106:*

[9] *Լեո, նշվ. աշխ., էջ 447:*

[10] *Ստ. Մալխասյանցը, անդրադառնալով վաղ միջնադարում դայակի ինստիտուտին, նշում է, որ երբ թագավորն իր որդուն հանձնում է դաստիարակության, վերջինս մեծանում էր իշխանի տանը՝ նրա կավակների հետ միասին, և դառնում էին կաթնեղբայր (տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 428, ծան. 70):*

Հայքի համար բախտորոշ ժամանակահատվածում: Իսկ Արտավազդ Մամիկոնյանի սերունդների վերաբերյալ սկզբնաղբյուրներում ուղղակի հաղորդումներ չկան, սակայն քննության ենթարկելով Մամիկոնյան ընտանիքում ծավալվող հետագա դեպքերը՝ կարող ենք փաստել, որ սպարապետ Արտավազդ Մամիկոնյանի որդին էր հետագայում կարճ ժամանակահատվածում տոհմի տանուտիրությունը զբաղեցրած Վաչե Մամիկոնյանը:

Ինչպես հայտնի է Փավստոս Բուզանդի հաղորդումներից, երբ Մուշեղ Մամիկոնյանը մի շարք մեղադրանքների արդյունքում մահապատժի ենթարկվեց[1] Վարազդատ արքայի (374-378 թթ.) հրամանով, Մամիկոնյան տոհմի նահապետ ու տանուտեր նշանակվեց Վաչե Մամիկոնյանը[2], ինչի արդյունքում թագավորը կարծես թե Մամիկոնյան տանուտիրությունը վերադարձնում էր տոհմի ավագ ճյուղին: Եթե նշենք նաև, որ որդիներին անվանում էին հայրերի անուններով[3], ապա կարող ենք փաստել, որ Վաչեն Արտավազդի որդին էր՝ քաջարի սպարապետ Վաչե Մամիկոնյանի թոռը: Վաչե կրտսերի գործունեության մասին սկզբնաղբյուրները սակավախոս են: Նա զոհվում է պարսիկների դեմ Զարեհավան քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում[4]: Ասվածը հիմնավորելու համար բերենք մեկ փաստ ևս: Ուսումնասիրելով IV դ. գործունեություն ծավալած Մամիկոնյան իշխանների տոհմաճյուղերի վերաբերյալ պատմիչների ցաքուցրիվ հաղորդումները՝ կարող ենք փաստել, որ Արշակ Բ-ի կողմից պետական ծառայության կանչված երեք եղբայրներից Վարդանի ժառանգն էր կրտսեր Վարդանը, որը ծնվել էր հոր սպանության ժամանակ՝ Էրախանի ամրոցում[5], Վասակի որդին էր ապագա սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը[6], իսկ Վահանի ժառանգներից հայտնի է Սամվելը, որը ոչ միայն չդարձավ հոր՝ պարսկական կողմնորոշման պարագլուխ Վահան Մամիկոնյանի գործակիցը, այլև սպանեց նրան՝ ազատելով Հայաստանը պարսից գործակալ իշխանից[7]: Իսկ, վերջիվերջո, Արտաշես Մամիկոնյանի որդին էր «Մանուէլ որդի Արտաշինայ ի Մամիկոնեան»[8]: Տվյալ ժամանակ հրապարակի վրա այլ Մամիկոնյաններ չկային, և Վաչեն կարող էր լինել միայն սպարապետ Արտավազդի որդին[9], ինչը նաև ժամանակագրական առումով էլ է ընդունելի:

Այսպիսով՝ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վարդան, Վասակ և Վահան Մամիկոնյանները Վաչե սպարապետի որդի Արտավազդի ժառանգները չէին, քանի որ տարիքով ավելի մեծ էին նրանից և միմիայն տոհմակիցներ էին: Խոսրով Կոտակը, հաշվի առնելով Վաչե սպարապետի մեծագույն ծառայությունները պետության առջև, պահելով տոհմում ավագության կարգը, սպարապետությունը տվեց նրա մանկահասակ որդուն՝ Արտավազդին, այլ ոչ թե նրա տոհմակից եղբայրներից մեկին: Սպարապետ Արտավազդը մահացել է համեմատաբար երիտասարդ հասակում, և, ամենայն հավանականությամբ, նրա որդին էր

---

[1] *Մուշեղ Մամիկոնյանի գործունեության վերաբերյալ տե՛ս Վարդանյան Ա., Մուշեղ Մամիկոնյանի գործունեության գնահատման հարցի շուրջ, ԲԵՀ, 2018, №1, էջ 14-27:*

[2] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 364:*

[3] *Ասվածի վառ ապացույցն է այն հանգամանքը, որ Վաչե կրտսերի որդին կրում էր հոր՝ սպարապետ Արտավազդի անունը: Ըստ Փավստոս Բուզանդի՝ մանուկ Արտավազդը, ինչպես նաև հայրը, քաջությամբ կռվել է Զարեհավանի ճակատամարտում պարսից զորաբանակի դեմ (տե՛ս նույն տեղում, էջ 384, 388), որտեղ հայկական բանակը՝ սպարապետ Մանվել Մամիկոնյանի հրամանատարությամբ ջախջախեց մարզպան Սուրենի գլխավորած պարսից բանակին (տե՛ս Վարդանյան Ա., Մանվել Մամիկոնյանը Մեծ Հայքի թագավորության խնամակալ և կառավարիչ, «Պատմություն և մշակույթ», 2020, N 1, էջ 67):*

[4] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 388:*

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 200, 202:*

[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 284: Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (այսուհետև՝ Մովսես Խորենացի), Ե., 1991, էջ 304:*

[7] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 276, 388: Մովսես Խորենացի, էջ 319:*

[8] *Նույն տեղում, էջ 364:*

[9] *Հ.Դավթյանը, տալով Մամիկոնյանների անվանացանկը, նշում է, որ Վաչեն Մուշեղ Մամիկոնյանի որդին է (տե՛ս Դավթյան Հ., Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Ե., 2015, էջ 18): Սակայն այս տեսակետը որևէ սկզբնաղբյուրով չի հաստատվում, քանի որ Մուշեղը և Վաչեն միմիայն տոհմակիցներ էին և գործել են նույն ժամանակահատվածում:*

Վաչէ Մամիկոնյանը, որը կրում էր պապի անունը, քանի որ Մամիկոնյան տոհմում կիրառվում էր անունների հաճախականությունը, և թոռանը մեծամասամբ կոչում էին պապի անունով: Արշակի գահակալման սկզբում Արտավազդը կենդանի չէր, իսկ Վաչէ կրտսերը մանկահասակ էր, և նորընծա արքան, օգտվելով առիթից, սպարապետությունը հանձնեց իր մտերիմ և դայակ Վասակ Մամիկոնյանին, ինչի արդյունքում ավագ ճյուղից սպարապետությունն անցավ տոհմի մյուս անդամներին:

Аргишти Варданян, ОДНО УТОЧНЕНИЕ ГЕНЕОЛОГИИ КНЯЖЕСКОЙ СЕМИ МАМИКОНЯНОВ. Семья Мамиконянов, будучи одним из величайших семейств Армении раннего средневековья, привлекла на себя внимание историков. Однако, в источниках много недостоверной информации. В X веке историк Месроп Вайоцдзореци, без всяких оснований, упоминает, что Вардан, Васак и Ваган Мамиконяны - сыновья Артавазда. Исходя из этого обстоятельства, дальнейшие исследователи считали их сыновьями Артавазда, но детальное исследование источников показывает, что Артавазд и Васак Мамиконяны были просто родственниками, а не отцом и сыном. Когда в 338 году Артавазд, будучи ребенком, был провозглашен командиром, Васак и его братья были в зрелом возрасте, и Васак в то время был уже опекуном царевича Аршака. Артавазд, как сын командира Вече Мамиконяна и представитель старшего рода, получил от Хосрова Котака командирство и главенство Мамиконянов, чем царь и сохранил порядок старшинства в княжеской семье.

Ключевые слова: Мамиконяны, Артавазд, Васак, Вече, Хосров Котак, Павстос Бузанд, Аршак II, историки, католикос.

Argishti Vardanyan, A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY. Being one of the most significant princely houses of the early medieval Armenia, Mamikonyans attracted the attention of historians. However, there is a lot of misinformation in the sources. The10th century historian Mesrop Vayotsdzoretsi mentions without any basis that Vartan, Vasak and Vahan Mamikonyans were the sons of Artavazd. And due to this circumstance, the further researchers considered them the sons of Artavazd. However, a detailed examination of the sources shows that Artavazd and Vasak Mamikonyans belonged to the same house, but were not a father and a son of the same family. When Artavazd was proclaimed commander as a child in 338, Vasak and his brothers were in adulthood and Vasak was already adviser of Prince Arshak then. Artavazd, as a son of commander Vache Mamikonyan and a representative of the family senior branch, received the roles of the commander and the head of Mamikonyan house from Khosrov Kotak, by which the king maintained the order of seniority.

Keywords: Mamikonyans, Artavazd, Vasak, Vache, Khosrov Kotak, Pavstos Buzand, Arshak II, historians, Catholicos.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200